

## **Հավելված**

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի  
2018թ. հունիսի 26-ի թիվ 1/434Ա որոշմամբ

### **ԿԱՐԳ**

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԲԱՆԱԶԱԵՐՈՎ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑԱՆԿԵՐՈՒՄ,  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆԿԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ԱՅԴՊԻՍԻ ՑԱՆԿԵՐԻՑ  
ՀԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՑԱՆԿԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԱՌՄԱՆ**

#### **Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ**

1. Սույն կարգը գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա:

2. Սույն կարգով սահմանվում է Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ՄԱԿ ԱԽ) բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում (այսուհետ՝ ՄԱԿ-ի ցանկեր) և ՄԱԿ ԱԽ 1373 բանաձևի ներքո հրապարակված օտարերկրյա ազգային ցանկերում (այսուհետ՝ Օտարերկրյա ազգային ցանկեր) անձանց կամ կազմակերպությունների ներառելու կամ այդպիսի ցանկերից հանելու առաջարկի ներկայացման, ինչպես նաև Լիազոր մարմնի կողմից հրապարակվող ցանկերում (այսուհետ՝ Լիազոր մարմնի ցանկեր) անձանց կամ կազմակերպությունների ներառման ընթացակարգը:

3. Լիազոր մարմնի ցանկերից հանելու խնդրանքի քննարկման կարգը սահմանվում է Լիազոր մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով:

4. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

**Գլուխ 2. ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում և Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման չափանիշները**

5. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա անձը կամ կազմակերպությունը կարող է առաջադրվել ՄԱԿ-ի ցանկերում ներառման նպատակով, եթե վերջինս համապատասխանում է ՄԱԿ ԱԽ բանաձևերով սահմանված՝ ցանկերում ներառման չափանիշներին:

6. Անձը կամ կազմակերպությունը կարող է առաջադրվել Օտարերկրյա ազգային ցանկերում ներառման նպատակով, եթե վերջինս համապատասխանում է ՄԱԿ ԱԽ 1373 բանաձևով և դրա համաձայն հրապարակված բանաձևերով սահմանված՝ ցանկերում ներառման չափանիշներին:

7. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմնի խնդրանքի հիման վրա անձը կամ կազմակերպությունը կարող է ներառվել Լիազոր մարմնի ցանկերում, եթե վերջինս համապատասխանում է ՄԱԿ ԱԽ 1373 բանաձևով և դրա համաձայն հրապարակված բանաձևերով կամ Լիազոր մարմնի կողմից սահմանված՝ ցանկերում ներառման չափանիշներին, այդ թվում, եթե.

1) Անձը կամ կազմակերպությունը որևէ կերպ կատարում կամ փորձում է կատարել ահաբեկչական գործողություններ, կամ մասնակցում կամ նպաստում է ահաբեկչական գործողությունների կատարմանը.

2) Կազմակերպությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է «1)» կետի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության, կամ վերահսկվում է վերջինիս կողմից, կամ

3) Անձը կամ կազմակերպությունը գործում է «1)» կետի ներքո ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության անունից կամ ցուցումով:

**Գլուխ 3. ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկի ներկայացման, Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման հիմքերը**

8. ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկի ներկայացման, ինչպես նաև Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման հիմքերն են.

1) Ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավվածության համար՝ կազմակերպության լուծարման կամ գործունեության արգելքի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը,

2) Ֆիզիկական անձի նկատմամբ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման մեղադրանքով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը,

3) Ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված կիրառելի ցանկերում ներգրավված լինելու հանգամանքը,

4) Այլ երկրի սույն մասի «1)» և «2)» կետերի առնչությամբ օրինական ուժի մեջ մտած՝ Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչվող վճռի կամ դատավճռի առկայությունը,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմնարար սկզբունքներին չհակասող այլ հիմքեր:

**Գլուխ 4. ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկի ներկայացման և Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգը**

9. Լիազոր մարմինը ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկի կամ Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման վերաբերյալ

տեղեկատվություն ստանալուց հետո, ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ցանկերում ներառելու հիմքերի և չափանիշների առկայությունը: Այդ նպատակով, Լիազոր մարմինը կարող է այլ մարմիններից պահանջել լրացուցիչ տեղեկություններ:

10. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Լիազոր մարմինը ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկը կամ Լիազոր մարմնի ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման հարցը ներկայացնում է «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գեների տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» մշտապես գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) քննարկմանը:

11. ՄԱԿ-ի ցանկերում, Օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու առաջարկի համար ողջամիտ հիմնավորման կամ ողջամիտ հիմքերի առկայության դեպքում Լիազոր մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնին՝ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգով ցանկերում ներառման նպատակով ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին կամ օտարերկրյա իրավասու մարմնին դիմելու համար՝ համաձայն սահմանված ընթացակարգերի և ստանդարտ ձևաչափերի: ՀՀ արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի կողմից ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին կամ օտարերկրյա իրավասու մարմնին ուղղված դիմումը պետք է պարունակի առաջադրվող անձի կամ կազմակերպության վերաբերյալ հնարավորինս ամբողջական և հանգամանալից տեղեկատվություն<sup>1</sup>, համապատասխան դեպքի նկարագրությունը, որը պետք է ներառի ցանկերում ընդգրկելու հիմքերի վերաբերյալ հնարավորինս մանրամասն տվյալներ, և (1267/1989 Հանձնաժողովին անուններ/անվանումներ առաջադրելու դեպքում) պետք

---

<sup>1</sup> Մասնավորապես՝ բավարար չափով նույնականացման տվյալներ, որոնք թույլ կտան ճշգրիտ և հավաստի կերպով նույնականացնել անհատներին և կազմակերպություններին, ինչպես նաև հնարավորության սահմաններում, Ինտերպոլի կողմից հատուկ ծանուցագիր թողարկելու համար պահանջվող տեղեկատվություն:

է մասնավորեցվի, թե արդյոք հրապարակման ենթակա է այն հանգամանքը, որ ցուցակումը նախաձեռնվել է ՀՀ կողմից:

12. Լիազոր մարմնի ցանկերում ներառելու համար ողջամիտ հիմնավորման կամ ողջամիտ հիմքերի առկայության դեպքում Լիազոր մարմինը երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկություն է հրապարակում Լիազոր մարմնի պաշտոնական կայքում, իսկ հնարավորության դեպքում ծանուցում է ուղարկում ցանկում ներառված անձին կամ կազմակերպությանը:

13. Ծանուցմամբ տեղեկացվում է հետևյալի մասին.

1) Ցանկում ներառելու հիմնավորումների մասին,

2) Ցանկում ներառված անձի կամ կազմակերպության իրավունքների, այդ թվում.

ա) Լիազոր մարմնի ցանկերից հանելու ընթացակարգերի մասին.

բ) Ստեղծված գույքի հաշվին վճարումներ կատարելու ընթացակարգերի մասին:

#### **Գլուխ 5. ՄԱԿ-ի ցանկերից և Օտարերկրյա ազգային ցանկերից անձանց կամ կազմակերպություններին հանելու առաջարկի ներկայացման ընթացակարգը**

14. ՄԱԿ ԱԽ բանաձևերով սահմանված ցուցակման չափանիշներին չհամապատասխանող կամ այլևս չհամապատասխանող անձանց կամ կազմակերպություններին, ինչպես նաև մահացած անձանց կամ լուծարված կազմակերպություններին ՄԱԿ-ի ցանկերից և Օտարերկրյա ազգային ցանկերից հանելու հիմքերի առկայության դեպքում Լիազոր մարմինը հարցը ներկայացնում է Միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: Վերջինիս հավանության դեպքում Լիազոր մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է ՀՀ արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնին՝ անձին կամ կազմակերպությանը ցանկերից հանելու նպատակով ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին կամ օտարերկրյա իրավասու մարմնին հարցում կատարելու միջնորդությամբ՝ ըստ սահմանված ընթացակարգերի և ստանդարտ ձևաչափերի:

15. ՄԱԿ ԱԽ 1988 բանաձևի ներքո ցուցակված ՀՀ քաղաքացիները կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք իրավունք ունեն դիմելու Լիազոր մարմնին՝ ցանկերից հանելու առաջարկությամբ ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին

դիմելու խնդրանքով: Դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Լիազոր մարմինը ծանուցում է ուղարկում Դիմում ներկայացրած անձին քննարկման արդյունքների վերաբերյալ: Յուրաքանչյուր չափանիշներին չհամապատասխանելու կամ այլևս չհամապատասխանելու հիմքերի առկայության դեպքում Լիազոր մարմինը ձեռնարկում է սույն Կարգի 14-րդ կետով սահմանված գործողությունները:

## **Գլուխ 6. Լիազոր մարմնի ցանկերում հրապարակվող տեղեկատվության կազմը և ցանկերի թարմացման կարգը**

16. Լիազոր մարմնի ցանկերում ներառված անձանց կամ կազմակերպություններին նույնականացնելու նպատակով հրապարակվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս մանրամասն և, առկայության դեպքում, ներառի.

1) **Անձանց դեպքում՝** անունը, ազգանունը, հայրանունը, ծածկանունը, ծննդյան տարին, ամիսը ամսաթիվը, քաղաքացիությունը, ազգությունը, սեռը, մասնագիտությունը, մշտական բնակության վայրը, անձնագրի կամ ճանապարհորդական փաստաթղթի, ինչպես նաև նույնականացման քարտի համարները, ներկա և նախկին հասցեները, իրավապահ մարմիններում կարգավիճակը (օրինակ՝ հետախուզման մեջ, կալանքի տակ, դատապարտված և այլն), գտնվելու վայրը, լուսանկարը և այլ բիոմետրիկ տվյալներ, ցուցակման հիմքերի հակիրճ նկարագրությունը և այլ տեղեկատվություն:

2) **Կազմակերպությունների դեպքում՝** ամբողջական և կրճատ անվանումը, հապավումը, այլ անուններ, որոնց ներքո կազմակերպությունը հայտնի է եղել, կազմակերպության հասցեն, գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հասցեները, ձեռնարկատիրական գործունեության բնույթը, գործունեության ծավալման վայրը (երկրները), կառավարման մարմինները, գրանցման համարը կամ այլ նույնականացման տվյալներ, կարգավիճակը (օրինակ՝ լուծարված, գործունեությունը դադարեցրած), էլեկտրոնային հասցեն, ցուցակման հիմքերի հակիրճ նկարագրությունը և այլ տեղեկատվություն:

17. Լիազոր մարմնի ցանկերը ենթակա են պարբերական թարմացման դրանցում լրացումներ կամ փոփոխություններ կատարվելու դեպքում, ինչպես նաև պարտադիր ստուգողական վերանայման տարեկան առնվազն մեկ անգամ: